

Որքինը (թեմրեյի) մեկ շաբաթուան մէջ կանցնի թէ որ օրը երեք անգամ վրան խոզի չաղած թարմ ճարպ դնես :

Ուրի մատուրներուն բլիթները կամ կոշտն ալ (նասըր), որ անտանելի նեղութիւն կուտայ, կտրելուն կերպը գիտցողին բան չէ, վասն զի ամիսը մեկ մը կտրելով ամենեւին նեղութիւն չիմանար. կտրելու համար ոմանք սովորութիւն ունին քառորդի չափ ոտքերնին տաք ջրի մէջ դնել որպէս զի կոշտը կակըղնայ, եւ յետոյ սուր գմելինով մը կըկտրեն : Տաք ջրի մէջ դնելով կակըղընելն ամենեւին հարկ չէ. անանկ պինտ եղած ժամանակը սուր գմելինով մը՝ — բայց ոչ երբեք ածելով (ուսբուրա) — պէտք է քիչ քիչ վրայէն բարակ մաշկի (զար) պէս առնուլ, մինչեւ որ արմատին հասնելով ցաւ զգալու պէս ըլլայ. մեծ ուշադրութիւն ընելու է որ խորունկ կտրելով արիւն չեկէ :

Ասիկայ սովորական եւ ամենէն դիւրին կերպն է. տեսնենք ուրիշ ինչ դիւրին հնարքներ ալ կան : Քաջախի մէջ եփած մանր սոխեր կան որ ուրիշ պտուղներու հետ շիշերու մէջ կըվաճառուին. հատ մը առ, երկուք կտրէ, կոշտին վրայ կապէ ու ամեն իրիկուն փոխէ. քանի մը օրուան մէջ այնպէս կըկակըղնայ որ ձեռքով կրնաս քաշել փրցընել. երբոր նորէն սկսի բուսնիլ, դուն ալ գործողութիւնը նորէն սկսէ : Թէ որ կուգես որ բոլորովին աներեւոյթ ըլլայ, ամեն օր քիչ մը վրան կիզիջ տնկաղ (potasse caustique) քսէ, որ դեղագործաց քով կըգտնուի :

Բլիթենի համար ուրիշ դիւրին դեղ մըն ալ կայ. սխտորի պճեղ մը (պիր տիշ սարմուսագ) տաք մոխրի մէջ եփէ ու գիշերն անկողին մտած ժամանակը բլիթենին վրայ դիր, լսբով մը կապէ. այնպէս կըկակըղընէ զայն որ երկու երեք օրուան մէջ արմատով կըփրթի կեկէ. յետոյ գաղջ ջրով ոտքը լուալու է : Շատ աւելի ազդու կըլլայ թէ որ քսանըջորս ժամուան մէջ երկու երեք անգամ սխտորը փոխուի :

ԱՆՅԱՋՈՂ ԳՈՂՈՒԹԻՒՆ : — Անցեալ օր ի Փարիզ համակառքի (omnibus) մը մէջ մաքուր հագուած պարոն մը գեղեցկահանդերձ խաբունի մը քով նստած էր, եւ ձեռքի մատանւոյն խոշոր ճաճանջազեղ աղամանդը ամենուն աչքը կըշլացընէր : Ո՞ր տը լա Փէ ըստած փողոցն որ կըհասնի, կտրքէն վար կիջնայ եւ մեկէն աներեւոյթ կըլլայ : Նոյն միջոցին խաբունը ձեռքը գրպանը կըտանի

որ քսակն հանէ ու տեղը վճարէ, եւ կընայի որ քսակը չկայ, գողցեր են : Եւ ինչ գտնէ աղեկ. Պ. Գողին աղամանդեայ մատնին. վասն զի անշուշտ խեղճը աճապարելով քսակն հանած ատենը մատնին մատեն ելեր, հոն մնացեր է :

Քսակին մէջ 8 ֆրանք կայ եղեր. — մատնին 1,000 ֆրանք արժեցուցեր են :

ԽՂՃՄՏԱՆԳԱՌԻ ԳՈՂ ՄԸ : — Գողին մեկը որ եօթը տարի առաջ բժշկի մը ծոցէն ոսկի ժամացոյցը գողցեր է եղեր, այս օրերս ետ դարձուցեր է զայն հանդերձ հարիւրին հինգ շահով՝ երկու հարիւր ֆրանք հաշուելով ժամացուցին գինը : Ծրարին մէջ երկտող գիր մըն ալ դրեր է, յորում կըսէ եղեր թէ որովհետեւ հիմակուան վիճակս կընէրէ՝ ահա ժամացոյցդ ետ կըդարձընեմ :

ԼՈՒՍԱՌՈՐՈՒԹԻՒՆ ԱՐԵԳԱԿԱՆ. — Վոլյասթոն, հոջակաւոր անգղիացի բնագետն որ 1828ին վախճանած է, այլ եւ այլ լուսաբանական հաշիւներով կըհաստատէ որ արեւուն լոյսը լրացեալ լուսնի լուսէն 801,072 անգամ աւելիպայծառ է :

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ. — Փարիզու մէջ 1851ին 999,062 բուն Գաղղիացի կար, 1,184 Գաղղիացի գրուած օտարազգիք, եւ 55,026 օտարազգիք : Փարիզածին փարիզացիք հազիւ ժողովրդեան երրորդ մասն են : Նոյն տարին Փարիզու մէջ 1,025,169 հոովմեղաւան կար, 15,566 լուսերական կամ կալվինական, 10,719 Հրեայ, եւ 4,008 այլ եւ այլ կրօնքէ. ասոնց մէջն էին նաեւ փարիզաբնակ Հայք :

ԼՈՆՏԻՄԱՅ ՓՈՂՈՑՆԵՐՈՒՆ ԼՈՒՍԱՌՈՐՈՒԹԻՒՆԸ. — Լոնտրայի փողոցներն ու հրապարակները լուսաւորելու համար 560,000 հատ կազալոյց կանքեղ կայ, եւ մեկ գիշերուան մէջ 15,000,000 խորանարդ ոտք կազ կըվառնեն. իսկ Փարիզու այս կանքեղները 108,755 հատ են միայն. ասով ալ կիմացուի թէ Լոնտրան Փարիզէն որչափ աւելի մեծ ու գիշերներն աւելի լուսաւոր է :

Propriétaire-gérant : A. LACROIX.

Ի ՓԱՐԻԶ, Ի ՏՊԱՐԱՆԻՆ ԱՐԱՄԵԱՆ.